գաբար հողի վերայ, երկրորդը մշակում է հողլոկ ժամանակաւորապէս: Առաջինը մուծուած է հարկային ցուցակ, adscripti censibus է եւ պարտաւոր է վճարել պետական հարկ, բացի կալուածատիրոջ հասանելի հողագինը: Երկրորդը չէ ցուցակագրուած եւ հարկ չէ վճարում պետութեան, այլ որպէս ազատ ձեռք իր հողային աշխատանքի համար ստանում է վարձ հողատիրոջից: Առաջինը կոչւում է այս պատճառով adscripticius 'ցուցակաւոր', երկրորդը՝ ազատ կոլոն:

Ցուցակաւոր կոլոնների դժբախտութիւնը սկսւում է այն օրից, երբ պետական դանձարանը հրահանգում է որ կալուածատէրերը պատասխանատու են իրենց կոլոնների հարկերի դանձման համար (C. J. XI 50, 2): Կալուածատիրոջն է պատկանում հողը եւ ուրեմն նա է պատասխանատուն իր հողից պետութեան հասանելիք հարկի համար: Հեռանայ գիւղից կոլոնը, ուրիշ ասպարէզ ընտրէ, կամ մինչեւ իսկ մեռնի, միեւնոյն է, նրա բաժին հողի հարկը պարտաւոր է վճարել կալուածատէրը:

Այս օրէնքն արդէն բաւական է որ կոլոնը կորցնէ տեղաշարժի ազատութիւնը եւ մեխուի հողին: Կալուածատիրոջ անձնական շահը պահանջում է որ չթողնէ կոլոնին լքել իր հողը: Կոլոնը շղթայւում է հողին: Որպէսզի ապահովէ տուրքերի դանձումը կալուածատէրը հարկ է համարում ձեռք դնել գիւղացու դոյքի վերայ, պատրաստ դրաւելու եթէ գիւղացին թերանայ իր պարտքը կատարել: Առաջ կոլոնը պետութեան հպատակ էր, այժմ դառնում կալուածատէր անհատի հպատակ, անպաշտպան, ենթակայ նրա կամքին: Նախկին colonus դառնում է servus:

Այս փոփոխութիւնը արձանագրուած է արդէն Դ. դարի վերջերին: Արկադ եւ Հոնոր կայսրները խոստովանում են, որ ցուցակաւոր կոլոնները, adscripti censibus, դրեթէ մատնուած են ճորտութեան quadam servitute dediti (C. J. XI 50, 2):

Ազատ կոլոնների դրութիւնը եւս վատթարանում է: Օրէնք կար, որ որդին ժառանգում է հօր վիճակը, լինի պլերէ թէ կոլոն: Անաստաս կայսրի (+518) օրէնքով, մի կոլոն որ 30 տարի աշխատում է միեւնոյն կալուածում, չի կարող այլ եւս թողնել իր տեղը եւ մնում է կապուած հողին (C. J. XI 48, 19): Կարծում են, որ այս օրէնքը վերաբերում է իսկապէս ազատ կոլոններին: Սրանք յամենայն դէպս չեն իջնում մինչեւ ցուցակաւոր կոլոնների մակարդակը, պահելով որոշ ազատութիւն:

Հռոմէական վերջալոյսի այս կարգերը յարատեւում են բիւզանդական շրջանում: Փոխւում են միայն անունները: Սեփականատէր գիւղացիների հողերը կոչւում են homokensa, կոլոններինը՝ homodoula. պլերէ վերակոչւում է chorites կամ curios: Ազատ ընդունում է աւելի որոշ անուն misthotos, 'վարձկալ կամ վարձաւոր', իսկ հետագայում mortites 'բաժնեւոր', ցուցակաւոր կոլոնը պահում է իր անունը յունական թարգմանութեամբ՝ epanographoi. ութերորդ դարում Խաւրեան օրէնքդրութեամբ կոլոնները յայտարարւում են արձակ իրենց հողային կապեալ դրութիւնից:

Արեւմտեան մեծ հարեւանի գիւղացիութեան վիճակը կարող է ուղեցոյց լինել մեզ համար եւ ոչ միայն տեսական նկատումով: Փոքր Ասիան անծանօթ երկիր չէ իրանական քաղաքակրթութեան: Աքեմեան աշխարհակալների օրերից նա ենթակայ է եղել Իրանի ոչ միայն քաղաքական իշխանութեան, այլ եւ կրել է սատրապական տնտեսութեան ազդեցութիւնը:

Փոքր Ասիական երկիրները մտնում էին Դարեհի հարկային սիստեմի մէջ: Սելեւկեան շրջանում եւս միեւնոյն տէրերն էին եւ կառավարութեան միեւնոյն եղանակը: Սասանեանների ժամանակ անմիջական դրացիներ էին եւ փոխադարձ ազդեցութեան տակ: Խոսրով Նուշիրուանի նորոգումները, նրա մուծած հարկային նոր սիստեմը, կարծում են, պարզ ընդօրինակութիւն է Բիւզանդական կարգերի, որ հիմնուած են Դիոկլետիանի ժամանակ եւ նրա ձեռքով:

Ընդհանուր նմանութիւն, չնչամման կէտեր, հնարաւոր են Բիւզանդիայի եւ Իրանական աշխարհի հարկատու ժողովրդեան դրութեան մէջ: Բիւզանդական կարգերը, որ շատ աւելի որոշ են եւ աներկբայ, կարող են առաջնորդել դէթ ուղիղ շաւղի վերայ դնելու իրանական եւ նրա հետ հայ գիւղացիութեան վի-